



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 50ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

Այսու գոհունակությամբ կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ յառաջիկայ Կիրակի, 21 Սեպտեմբեր 2008, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացս Ս. Պատարագի, պիտի կատարուի Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Սրբատառ կոնդակի ընթերցում:

Հայրապետական կոնդակը նուիրուած է Հիւսիսային Ամերիկայի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ հոգեւոր մատակարարումի սկսման 50րդ տարեդարձին, որ կը զուգահիշի Արեւմտեան մեր Թեմի հաստատման 35րդ տարեդարձին:

Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան, պիտի փոխանցէ իր խօսքը եւ պիտի ընթերցէ Վեհափառ Հայրապետին սրբատար կոնդակը:

Նկատի ունենալով, որ Կիրակի, 21 Սեպտեմբերը նաեւ Հայաստանի անկախութեան վերահաստատման տարեդարձն է, յընթացս Ս. Պատարագի, աղօթք պիտի բարձրացուի առ Աստուած, մեր հայրենիքի բարգաւաճման եւ անվտանգութեան ամրապնդման համար:

## **PONTIFICAL ENCYCLICAL ON THE 50<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE ESTABLISHMENT OF A NORTH AMERICAN PRELACY**

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on Sunday, September 21<sup>st</sup>, the Pontifical Encyclical of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, on the 50<sup>th</sup> anniversary of the establishment of Prelacy in North America, which coincides with the 35<sup>th</sup> anniversary of the Western Prelacy, will be read in all Prelacy Churches.

The Prelate will preside over Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood during which he will read the Pontifical Encyclical.

By the direction of the Prelate, prayers will also be offered during Divine Liturgy in all Prelacy Churches in celebration of the 17<sup>th</sup> anniversary of Armenia's independence.

**ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԵՒ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ  
ԹՈՒՐՔԻՈՅ ԱՐԵՎԵԼԸԸ ՉՈՂ ԳԱՑԱԾ ԻՐԱՆԱՅԱՅԵՐՈՒ  
ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, յառաջիկայ Կիրակի, 21 Սեպտեմբերին, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ յատուկ արարողութիւն տեղի պիտի ունենայ ի յիշատակ Իրանահայ մեր գաղութի այն զաւակներուն, որոնք 9 Սեպտեմբերին զոհ գացին Թուրքիոյ արեւելեան շրջանին մէջ, Իրանի սահմանին մօտ տեղի ունեցած ծանօթ արկածին:

Նոյն առիթով, հոգեհանգստեան պաշտօն տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի: Հոգեհանգստեան աղօթքին կը մասնակցի Ազգ. Առաջնորդարանիս հովանին տակ գործող «Նոր Ջուղայի Բարեկամներ» յանձնախումբը:

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ ներկայ ըլլայ այս արարողութեանց, աղօթք բարձրացնէ զոհերու հոգիներուն եւ վիրաւորներուն շուտափոյթ ապաքինման համար:

**PRAYERS FOR THE VICTIMS OF THE TURKEY BUS CRASH**

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on Sunday, September 21<sup>st</sup>, special prayers will be offered for the victims of the bus crash which occurred in Eastern Turkey near the Iran border on September 9<sup>th</sup>.

On this solemn occasion, requiem service will also be offered for the souls of the victims at St. Mary's Church in Glendale in which members of the "Friends of New Julfa" Committee, which serves under the auspices of the Prelacy, will participate.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Չորեքշաբթի, 17 Սեպտեմբերի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հայաստանի տնտեսութեան նախարար Ներսես Երիցեանի, որ պաշտօնական այցելութեամբ Լոս Անճելըս կը գտնուի: Յարգելի նախարարին կ'ընկերանային Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, նախարարական պատուիրակութեան ու Հայաստանի հիւպատոսութեան անձնակազմի անդամներ:

Առաջնորդ Սրբազանին կողքին, հայրենի նախարարի հիւրընկալման մասնակեցան Թեմիս Կրօնական Ժողովի ատենապետ եւ փոխ ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ Ազգային Վարչութեան անդամներէն Տիար Խաչիկ Երեցեան:

Հանդիպումը առիթ եղավ խորհրդակցելու Հայաստանի դիմագրաված հարցերուն եւ իրագործումներուն մասին, մանաւանդ որ մեր ժողովուրդը քանի մը օրէն պիտի տօնէ Հայաստանի հանրապետութեան անկախութեան վերահաստատման տարեդարձը: Հիւր նախարարը ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուաւ հայրենիքի իրագործումներուն ու մարտահրաւերներուն մասին: Ան մանրամասնօրէն խօսեցաւ Հայաստանի տնտեսական բարգաւաճման ու աշխատանքի արդիականացման կարելիութիւններուն մասին, նշելով, որ հայրենի պետութիւնը ծրագիրներ մշակած է, որպէսզի Հայաստան դառնայ մրցունակ երկիր, անոր պետական, կրթական ու այլ համակարգները որդեգրեն արդի արհեստագիտութեան միջոցները:



Խօսակցութեան նիւթ դարձան այն հանդիպումներն ու գործակցութեան ծրագիրները, որոնք մաս կը կազմեն յարգելի նախարարին Լոս Անճելըս առաքելութեան:

Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, լուսաբանութիւններ տուաւ մեր 35ամեայ թեմի կտրած հանգրուաններուն ու ծառայական դաշտերուն մասին, որոնք կը կիրարկուին գլխաւորաբար եկեղեցիներուն ու ազգային վարժարաններուն ճամբով: Ան նաեւ խօսեցաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող ծառայական աշխատանքներուն մասին, ընդգծելով միաժամանակ, թէ Զաւիճորնիոյ ու ընդհանրապէս Միացեալ Նահանգներու հայութիւնը մօտէն կը հետեւի Հայաստանի իրադարձութիւններուն եւ հոգուով ու գործքով զօրավիգ է անոր բարգաւաճման ու կայունութեան պահպանման ճիգերուն:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը եւ հիւր նախարարը յուշանուէրներ փոխանակեցին, ապա նաեւ՝ այցելեցին Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի տարբեր բաժանմունքները:

## **PRELATE WELCOMES VISIT OF ARMENIA'S MINISTER OF ECONOMY NERSES YERITSYAN**

On the afternoon of Wednesday, September 17<sup>th</sup>, Armenia's Minister of Economy H.E. Nerses Yeritsyan paid an official visit to the Prelacy, where he was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, as well as Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Religious Council Vice-Chair Very Rev. Fr. Barthev Gulumian, and Executive Council member Mr. Khatchig Yeretziyan. Among the delegation accompanying Mr. Yeritsyan was Consul General the Honorable Armen Liloyan and ministry and consulate staff.

During their meeting the Prelate and guests discussed the challenges Armenia has overcome, with Mr. Yeritsyan detailing the economic progress the republic has experienced and current efforts to further modernize the system to

make Armenia a competitor in the global economy. Mr. Yeritsyan concluded by speaking on the purpose of his current visit to Los Angeles.

The Prelate then spoke of the mission of the Prelacy and achievements



since its establishment 35 years ago, including the endeavors of our churches and schools. In conclusion, the Prelate reasserted the commitment of the Armenian community of California and of the United States in general to the welfare of Armenia, and actively contributes to the prosperity of our nation.

The meeting ended with the exchange of mementos, following

which the guests were given a tour of the headquarters.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐԻՏՅԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԸ

Օգոստոս 14-19-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Դպրեվանքին մէջ, հրաւերով ու նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, տեղի ունեցաւ Երիտասարդական Համագումար, որուն խորագիրն էր «Հայ Երիտասարդը 21րդ դարու մարտահրաւերներուն դիմաց»: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինութեամբ, Արեւմտեան մեր թեմէն համագումարին մասնակցեցան 10 երիտասարդ-երիտասարդուհիներ, գլխաւորութեամբ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեանի:



Պատուիրակութեան անդամները Ամերիկա վերադարձան մեծ խանդավառութեամբ եւ վերանորոգուած յանձնառութեամբ, լիցքաւորուած՝ Հայ Եկեղեցւոյ արժէքներով, եւ հասակակից տարբեր երկիրներու երիտասարդներու հետ ծանօթացման քաղցր յուշերով:

Զորեքշաբթի, 17 Սեպտեմբերին, համագումարին

մասնակցող երիտասարդները այցելեցին Ազգային Առաջնորդարան, իրենց երախտագիտութիւնը յայտնելու Առաջնորդ Սրբազան Հօր՝ իրենց

շնորհուած այս եզակի առիթին համար, եւ Սրբազանին փոխանցելու իրենց շահած փորձառութիւնն ու տպաւորութիւնները:

Առաջնորդ Սրբազանը իր կարգին, գնահատեց անոնց գործօն մասնակցութիւնը Համագումարին, անոնց նուիրումը եւ ծառայական կեանքը Արեւմտեան մեր Թեմէն ներս, զանոնք քաջալերելով առաւել աշխուժութեամբ մասնակցելու եկեղեցական ու գաղութի մեր կեանքին:

Յայտնենք, որ յառաջիկայ Կիրակի, 21 Սեպտեմբերի առաւօտուն, Ազգային Առաջնորդարանի Կիրակնօրեայ յայտագրէն հարցազրոյց մը պիտի կատարուի համագումարին մասնակցող երիտասարդներէն մէկ քանի ներկայացուցիչներու հետ, լսելու անոնց ունեցած փորձառութիւնը եւ տպաւորութիւնները համագումարին մասին:

## **PRELATE WELCOMES ANTELIAS YOUTH CONFERENCE PARTICIPANTS**

Under the auspices of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, in mid-August a youth conference titled “The Youth and the Challenges of the 21<sup>st</sup> Century” took place at the Seminary in Bikfaya, Lebanon. By the ordinance of the H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, ten youth from the Prelacy participated in the conference under the direction of Very Rev. Fr. Barthev Gulumian.

On Wednesday, September 17<sup>th</sup>, the participants met with the Prelate to



thank him for the unique opportunity and to convey their thoughts on the conference. The Prelate commended them for their active participation throughout the conference as well as their commitment to their fellow youth within the Western Prelacy, encouraging them to continue on their path of service with even greater vigor.

On Sunday, September 21<sup>st</sup>, an interview with members of the delegation will air on the Prelacy weekly program on Horizon television.

## **ՇՈՐԳԵԿԱՌՔԻ ԱՐԿԱԾԻՆ ԱՌԻԹՈՎ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ ՅՂԵՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ**

Chatsworth շրջանին մէջ անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած շոգեկառքի ծանր արկածին առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր.

Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երկուշաբթի, 15 Սեպտեմբերին ցաւակցական ու կարեկցանքի նամակ մը յղեց Լոս Անճելըսի քաղաքապետ Անթոնիօ Վիերակոսայի:

Նամակին մէջ, Առաջնորդ Սրբազանը, յանուն Թեմիս հոգեւորականաց դասուն, ժողովականութեան ու հաւատացեալ ժողովուրդին, ցաւ կը յայտէ արկածին համար, կը ցաւակցի զոհերուն ընտանիքներուն ու կը մաղթէ, որ վիրաւորները շուտափոյթ ապաքինում գտնեն: Առաջնորդ Սրբազանը նաեւ կը նշէ, որ Կիրակի, 14 Սեպտեմբերին, մեր եկեղեցիներուն մէջ յատուկ աղօթք մատուցուեցաւ զոհերուն հոգիներու խաղաղութեան եւ վիրաւորներուն շուտափոյթ ապաքինման համար:

### **PRELATE SENDS A LETTER OF CONDOLENCE TO MAYOR ANTONIO VILLARAIGOSA FOLLOWING THE METROLINK CRASH**

On Monday, September 15<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, sent a letter of condolence to Los Angeles Mayor the Honorable Antonio Villaraigosa, following the tragic Metrolink crash which occurred on Friday.

On behalf of the Prelacy Councils and parishioners, the Prelate expressed his sympathies for the lives lost in the tragedy and conveyed to the Mayor that special prayers were offered in all our Churches on Sunday, September 14<sup>th</sup>, for the souls of the victims and for the speedy recovery of the injured.

### **ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ՅՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

Ինչպէս տեղեակ էք, Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը 2008 տարին հռչակած է Քրիստոնեական Դաստիարակութեան տարի:

Կրօնական ժողովը, Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Յօր թելադրութեամբ, նախաձեռնած է ծխական շրջաններու մէջ քրիստոնեական դաստիարակութեան տարուան նուիրուած հոգեւոր կրթութեան եւ աճման սատարող ժողովրդային դասախօսական լսարաններ:

Այս ծիրին մէջ, երրորդ դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 23 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 7:00-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Դասախօսութիւնը պիտի ներկայացնէ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, նիւթ ունենալով՝ Քրիստոնեական հայեցի առողջ դաստիարակութիւնը ընտանիքէ, դպրոցէ, ընկերային-ազգային շրջանակներէ, միջավայրէ ներս:

## “YEAR OF CHRISTIAN EDUCATION” LECTURE SERIES

The Prelacy Religious Council, under the direction of the Prelate, has organized lectures in various parishes in celebration of “The Year of Christian Education”.

The next lecture in this series is a three part lecture by Very Rev. Fr. Muron Aznikian on “Religious Education in Family, School, Social, and Community Life”, the first of which will take place on Tuesday, September 23<sup>rd</sup>, at 7:00 p.m. at St. Mary’s Church in Glendale. Part two and three of the series will take place on Wednesday, October 1<sup>st</sup> and Wednesday, October 8<sup>th</sup> respectively at 7:00 p.m. at St. Mary’s Church.

The lecture series continues on Tuesday, October 14<sup>th</sup>, with a presentation by Very Rev. Fr. Barthev Gulumian on “Our Youth and the Need for and Importance of Religious Education”.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱԶԱՆԸ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՄԸ ՅԱՆՁՆԵՑ ՎԱՍՏԱԿԱՇՏ ԽՄբԱՎԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԵՔԻՃԵԱՆԻ

Կիրակի, 14 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 6-ին, մեծարանքի յատուկ ձեռնարկ մը տեղի ունեցաւ Կլենտոյլի Presbyterian եկեղեցւոյ մէջ, ի պատիւ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր խմբավար՝ Փրոֆ. Յովհաննէս Զեքիճեանի: Գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին անուանի արուեստագետներ:



Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ ձեռնարկին եւ գնահատանքի ու օրհնութեան գիր մը յանձնեց մեծանուն արուեստագետին: Առաջնորդ Սրբազանին կ’ընկերանար Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

## PRELATE PRESENTS MAESTRO HOVHANNES TCHEKIDJIAN WITH A LETTER OF BLESSING

On the evening of Sunday, September 14<sup>th</sup>, Maestro Hovhannes Tchekidjian of the State Academic Choir of Armenia was honored at during a concert which took place at Glendale Presbyterian Church. Various artists participated in the event.

The Prelate attended the concert, during which he presented Maestro Tchekidjian with a letter of commendation and blessing. Rev. Fr. Ardag Demirjian accompanied the Prelate.